

ՄՏԵՐԻՄ ԺՈՂՈՎՐԳԵԱՆ

ՄԵՐ

Հարածը երևու անգամ
 ևր հրատարակուի :
 Ստորագրութեան տեղն
 է իմամ Ալի Խան վա-
 ռի յարկը Թիւ 15 :



Տարեկան գինն է կանխիկ
 զուր 100 :
 Դուրսերէն բաժանորդ
 եղողները փոստային
 ծախքը վճարելու են :

23 ՄՍԲՏ

Գ. ՏՍԲԻ 1863

ԹԻՒ 4

Ղզզի մը յառաջացման առաջին և զը-
 խաւոր սրայնմաներէն մէկն ալ ըստ մեր
 կարծեաց լրագիրներն համարուելոյն էր
 որ Սէր անուն լրագիրս ազգիս նուիրել
 համարձակէր էինք բայց քանի մը ՚ի հար-
 կէ պատճառներ ստիպելը էին զմեզ ժա-
 մանակ մը Թերթերնուս շարունակու-
 Թիւնը ընդհատել : ՚ի հարկէ պատճառ-
 ներ կըսենք , վասն զի այն միջոցներն ո-
 ընցման կընար և արդ պիտի կարենայ
 մեր ձեռնարկութիւնը յառաջանալ կը
 սրահսէին մեզի :

Ինչպէս որ երբորդ Թուոյն մէջ Թեր-
 Թերնուն ինչու համար ժամանակին չը-
 տրուելուն պատճառը ներկայ Թերթոյն
 մեր բաժանորդաց իմացընել խոստացեր
 էինք , ահա այս անգամ , վստահ մեր
 ձեռնարկութեան յառաջանալուն վրայ ,
 կը յայտնենք Թէ այն դժուարութիւններն
 որ զմեզ կը հարկադրէին լրագիրնին ժա-
 մանակին հասցնելու՝ դիւրնցան : Աւ-
 տի Սէրը հինայ ունեցաւ հարունտ տը-
 պարան մը , և լըժամիտ հեղինակաց օգ-
 նականութիւնը , որոնք լրագրի մը ամե-
 նակարեւոր տարեքն են , ուստի այս զը-
 խաւոր դիւրութիւնքն ստանալէն վերջը
 մեր առաջին ջանքը պիտի ըլլայ մեր ար-
 դոյ բաժանորդները՝ զօհացընել , Հոս

Թոյլ տրուի մեզի համառօտ խորհրդա-
 ծութիւն մը ընել Թէ դիտութեան փա-
 փաքն աւելի ազգիս փոքր և ազքատ մա-
 սին սրտերն գրաւած ըլլալով՝ այսպիսի
 ձեռնարկութեանց գլուխ կեցող անձինք
 չեն համարձակիր իրենց ձայնին արձա-
 գանդը ինչուան հարուստ քսակներու
 հասցնել : Բայց այսու ամենայնիւ չենք
 ուզեր կարծեցընել Թէ մենք մեղադրող
 ենք մեր ազգին մեծամեծները , ըստ ո-
 բում մեծ փորձառութիւն ունինք իրենց
 գրութեանը բազդատմամբ՝ ըրած անձ-
 նանուիրութեանց զօհերուն , որոնց զը-
 խաւոր ապացոյց և արդիւնքն է ազգիս մէջ
 նորարծարծ առ բարին ու գեղեցիկն դի-
 մելու ջերմ եռանդը :

Մինչդեռ քանի մը տարի առաջ Հայ ա-
 նունը Եւրոպիոյ ականջը հասնէր յիրու-
 ցան եղած անձնասէր ու անձնաշահ վաճա-
 ռականաց տխուր պատկեր մը կը նկատէր ,
 բայց այսօր Թաղաւորութիւնք հաշտ ա-
 չերով կը նային Հայկայ սերունդին վը-
 րայ , կը գովեն իւր ուսումնաստեղ և
 քաղաքակիրթ ասպարէզի մը մէջ ար-
 շաւելու փափաքն և կը զարմանան իւր
 յաջողակութեանը վրայ :

— Հոս այս առթիւ քանի մը խօսք ալ մեր
 բունելու ընթացքին վրայ գրուցենք . ստ

այժմ մեր նիւթերն նոյնը պիտի ըլլան
ինչոր խոստացեր էինք մեր առջի թեր-
թերուն մէջ, այսինքն ազգային, քաղա-
քական պատմութիւնք, և ուսումնական
տեղեկութիւնք: Ասոնց վրայ խորհրդածելն
հետեւեալ թերթին թողլով երախտա-
պարտ սրտիւ շնորհակալ կըլլանք մեր
բաժանորդաց որ յօժար կամօք ողջու-
նեցին մեր սէրը:

Բ. Օ. Դ

Մինչդեռ թերթս մամուլի տակ էր
ուրախութեամբ լսեցինք թէ բարձրա-
զոյն դուռն սահմանադրական կանոնադ-
րութեանց ընդունելութեան շնորհքն
զլացած չէ. սակայն և այնպէս չենք զանց
առնուլ յիշեցնել մերայնոց թէ եթէ յու-
սանք որ մեր ազգին երջանկութեան
և յառաջադիմութեան մի միայն միջոցը
սահմանադրութեան ընդունուիլն է՝ չա-
րաջար կը սխալինք: Քանի որ չկայ սէր
միութիւն, չկան նաև ազգ և յառաջա-
դիմութիւն:

Է Մ Է Մ Ա Ր Դ Ե Ն

ՂԵՏԱՆԵԱՅ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Տես թիւ 2.

Կնիկ մարդուն ուրիշ մէկ ազգե-
ցութիւնն ալ կայ, արդարև առջինն
(մօր ազգեցութեանը) չափ երկարա-
տև չէ, բայց այնպէս սաստիկ է որ ոչ
ոք անոր դէմ կրնայ դնել: Այս ազ-
գեցութիւնը կը սկսի պատանեկութեան
ատեն, և անոր սկսած ատենն է որ
կեանքը մեզի ուրախութեան շարք մը
կ'երեւայ, ուրախութիւն՝ որ երկնա-
յին ուրախութեան ՚ի բացուստ տեսն-
ուած մէկ պատկերն է: Ան ատեն յան-
կարծ կը կատարուի ան յեղափոխու-
թիւնը որ մարդու ճակատագիրը կը
փոխէ:

Երկնաւոր պատկեր մը մարդու բա-
լոր խորհուրդներուն մէջ կ'իջնէ, կը
խոռովէ զնա, միանգամայն կ'աղչեցընէ:
Ան որ անոր ՚ի սկզբան սիրելի էր, այ-
սինքն՝ խանդաղատանքը որով մայրը պա-
շարած էր զնա, անոր այլ ևս բաւական
չըլլար. աւելի մտերիմ, աւելի համօ-
րէն սէր մը կ'ուզէ. իր սէրը, Աստուծոյ
մարդուն համար ստեղծած ընկերը կու-
զէ. կ'ուզէ ան հրեշտակը զոր միայն
պիտի սիրէ, յաւիտեան պիտի սիրէ.
Ընտրեց երանութիւնը կ'ուզէ. իր աս
կէսը վերջապէս կը տեսնէ, և խսկոյն
բոլոր բաղձանքներն ան առարկային մէջ
միայն կ'ամփոփուին:

Դեռ երէկ կամքը իբրև երկաթ
բիրտ էր, այսօր ոչ հաճոյք ունի ոչ
կամք, սիրոյն հետ դիւցադնական բան
մ'ալ սրտին մէջ կարթննայ, և կեան-
քն իրեն պատուական կ'ըլլայ անոր
համար միայն որ իր սիրելոյն համար
նուիրէ: Կ'ուզէք տեսնել ան վհուկը
որ աս յեղափոխութիւնը յառաջ բե-
րաւ, աչուրնիդ դարձուցէք. մանուկ աղ-
ջիկ մըն է որուն հայեցուածն անմեղու-
թիւն կը բուրէ: Իր շնչած աղբմանը
վրայ ինք ալ զարմացած, զկայ առած և
մտախոհ, կորագլուխ կը շիկնի. բայց
չիկնելուն մէջ կը տեսնէ ան որուն տի-
րեց, և իրեն հետ կը կապէ: Եւ ո՛վ
արդեօք յայտնեց աղկանն ան դաղա-
նիքը զոր սիրականը բոլոր աշխարհի թա-
գուցանել կ'ուզէր: Ո՛վ, նոյն իսկ սի-
րականը, ան լուութիւնը, ան մեծարան-
քը, ան հլութիւնը, ան երկիւղած սէ-
րը որովք սիրող երիտասարդը սիրուհ-
ւոյն առջին անշարժ ու դողալով կը կե-
նայ, բոլորը մէկէն տիեզերական լեզու
մըն է. այրեցած գօտւոյն խորշակին,
ինչպէս նաև հիւսիսային բեւեռին սառ-
նամանեացը տակ՝ անմեղութիւնն աս
լեզուն կը հասկնայ. կը հասկնայ առանց
ուսած ըլլալու. քանզի բնութեան մէկ
ընդհանուր օրէնքն է, որ գեղեցկու-
թիւնը կատարեալ եղածին պէս՝ իրմէ

դուրս եղող կամքի մը դշտոյն ըլլայ :

Արդ , աս աղջիկը որ դեռ ինքըզինքը չի ճանչնար , մինչև ան օրը մինակ կը հնազանդէր առանց խորհրդածելու , աշխարհի մէջ եղած . անցքերուն բնաւ տեղեակ չէր , վերջապէս՝ անգէտ և անփորձ աղջիկը . իսկոյն կարող և տիրող կ'ըլլայ : Կըլլայ կենացը և պատուոյն իշխան երիկ մարդու մը՝ զոր կիրքը ձգտելով կը բերէ : Արկամի , արդէն կամքը կը կատարուի . կը հրամայէ , և իսկ և իսկ անոր հրամանին հնազանդութիւն կը մատուցուի : Անոր մանկական կամքը կամ հայրենեաց դիւցազն մը կ'ընէ իրեն հնազանդող երիկ մարդը , և կամ ընտանեաց սպանող . ասոնց մէկը կամ միւսն ընելը՝ կնկանը հոգւոյն վսեմութենէն կամ կրիցը կուրութենէն կախում ունի : Ա՛վ կանայք , դուք կը թագաւորէք . և երիկ մարդը ձեր իշխանութեանը տակն է . կը թագաւորէք ձեր զաւկներուն վրայ կը թագաւորէք ձեր սիրականներուն վրայ , կը թագաւորէք ձեր ամուսնոց վրայ : Երիկ մարդիկ վայրապար կ'ըսեն թէ ձեր տէրն են . անոնք ան ատեն մարդ են՝ երբ դուք անոնց գոյութիւնը կատարեալ կ'ընէք . երիկ մարդն առանց կրնական մը թերիմարդ է . Վայրապար ձենէ վեր ըլլալ կը պարծին , անոնց փառքն ու ամօթը ձենէ կուգան . և աս բանն ամեն տեղ կը տեսնուի , այնպէս առասպելաց մէջ , ինչպէս պատմութեան մէջ , Կիրկէի պալատը՝ ուր պատերազմողք խողի կը փոխուէին , և Մէտիլներուն պալատը՝ ուր մարդիկ գազան կ'ըլլային :

Վեհանձն մարդուն մէկը , Պայրն , վեհանձն գործի մը վրայ խօսած ատենը կը վիպայէ թէ ան գործին ձեռնամուխ ըլլալու չէր համարձակեր . բարեկամները ստիպեցին , ինք մերժեց եւ յետոյ միտքը խորհուրդ մը եկաւ . կեցաւ ու դռնէն . " Ա՛հ , եթէ * * * ը հոս ըլլար ինծի առ գործին ձեռնարկել կու-

տար : Կնիկ մարդն է որ իր հրապուրանացն ու գեղեցկութեանը հետ միանգամայն երիկ մարդն դէպ 'ի փառք և առաքինութիւն կը մղէ . իմ խնամակալ հրեշտակս ան պիտի ըլլայ :

Ուրեմն եթէ անհակառակելի ճշմարտութիւն մը կայ , աս ճշմարտութիւնը կնիկ մարդուն ազդեցութիւնն է . ազդեցութիւն մը որ բոլոր կենաց վրայ կ'ազդէ , և զոր կնիկ մարդիկ կը բանեցնեն եբրե մայր , իբրև տարիածու և իբրև ամուսին :

Ասոնք դնելն ետքը , կը հարցնենք թէ ինչ անբնական ժողովուրդ է որով մարդիկ ասանկ տիեզերական շարժիչ մը թողուցած են : Ինչու համար բարոյականի վրայ գրողներ՝ ասանկ քաղցրը և ազդու կարողութիւն մը իրենց օգնական ընելու տեղ՝ անիկայ տկարացնելու աշխատած են : Ինչու համար բոլոր դարերուն օրէնսդիրներն աս ազդեցութիւնը մարդուս աղէտալի ընելու միաբանած են : Քանզի չենք կրնար առանց դիտողութեան անցնիլ թէ կնիկ մարդուն մեզի հասուցած բոլոր չարիքներուն պատճառը մենք ենք , իսկ անոնց ըրած բոլոր բարիքները՝ անոնցմէ են : Մենք զանոնք ապուշ ընելու որչափ ջանանք , տակաւին անոնք խորհուրդ , իմացութիւն և հոգի ունին . մեր նախապաշարումները որչափ բարբարոսական են , անոնք տակաւին Եւրոպիոյ փառքն ու մեր կենացը ընկերներն են : Գեռ շատ ժամանակ չէ որ երևելի դիտուններ կնիկ մարդուն հոգի ունենալն ուրացան . բայց նախախնամութիւնը գողցես ասանկ թշնամանաց վրէժն աննել ուզելով , Լուվրի մէջ յարոյց իղապօ մը՝ որ Գաղիա Սնագլիոյ մատնեց , և Լօրէնի մօտ խեղճ հիւղի մը մէջ ծնած Յովհաննա ա՛՛՛րք , հայ-

1. Աս գործն էր ատենակալաց խորհրդանշին մէջ պարտքի համար բանտարկելոց աղերսաւորը պաշտպանել : Տես . Յիշատակը Պայրնի . հատ . Բ . էջ 250 :

ընկերք ազատեց . Անգղիացիները զար-
հաւ , և իբրև դիւցազն ապրելէ ետքը ,
մարտիրոսական մահուամբ մեռաւ :

Կնիկ մարդիկ նուաստացնելու հա-
մար մեր ըրածներն , ու մեզ քաղաքա-
կիրթ ընելու համար անոնց ըրածները
կարծեմ մեր պատմութեան ամենէն
բարոյական և ամենէն թատերական
տեսարաններն են : Ժամանակ եղաւ որ
անոնց գեղեցիկութիւնը մինակ բարբա-
րութեան դէմ կը կռուէր : Բանտար-
կեալներուն պէս աշտարակաւոր բեր-
դերու մէջ փակուած՝ հոն կը կրթէին
գոռ պատերազմողներ՝ որոնք անոնց ար-
կարութիւնը կ'արհամարհէին , բայց
գեղեցիկութեանը պաշտօն կը մատուցա-
նէին :

Տեսնելով որ զիրենք կրթութենէ
զրկողներէն տգէտ կը կոչուին , երիկ
մարդոց նախապաշարմունքէն կ'անարդ-
ուին , բայց սէրը զիրենք կ'աստուածա-
ցնէ , տկար , երկչտ , և իրենց չորսդին
մինակ սուր և զինուոր տեսնելով , ի
րենց բռնաւորներուն կիրքերը ձեռք ա-
ռին , և կիրքերը ձեռք առնելով՝ զա-
նոնք ողբեցին ու մեղմացուցին : Կնիկ
մարդիկ էին որ քաջամարտիկները ար-
կարները պաշտպանելու առաջնորդեցին :
Ասպետները պաշտպաններ եղան . անի-
բաւութիւններն ուղղեցին , և այնպէս
օրինաց թագաւորելուն պատրաստու-
թիւն ըրին : Աերջապէս , ասպետու-
թիւնը որ թագաւորութիւններ առնե-
լու համար կը կռուէր , այնչափ մարդա-
սէր եղաւ որ կանանց գեղեցիկութիւնը
պաշտպանելու համար սկսաւ կռուիլ , և
քաղաքակրթութիւնը կնիկ մարդուն սի-
բովը սկսաւ զաղիւյ մէջ մեծ յեղափո-
խութիւն եղած երեցաւ ան օրը՝ որ աս-
պետ մը , իմանալով թէ պաշարած բերդը
թշնամուցն կնիկն ապաւինած է , և թէ
աս կնիկը մայր ըլլալու մօտ է , զօրքը
էտ քաշեց :

(Երրորդական)

Ա . Մ . Գ .

ԲԱՐԵՐԱՐ ԶԵՆԱՍԻՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Բարերարութիւնը անզուգական ա-
ռաքինութիւններէն մէկն ըլլալը անու-
րանալի է , և անոր յանակնկալս պատահ-
մունքը այնպէս ազդեցութիւն կ'ընէ
մարդկային զգացմանց՝ որ շատ անգամ
երախտասպարտն ինքն իրմէ ելլելով գեր-
բնական յատկութիւն կ'ուզէ նուիրել
անոր՝ որ իր մէկ թշուառ և անեղանկ
կարծած դէն փրկարար բազիլաւ մը կը
զերծանէ զինքը :

Ասանկով է որ բնութեան դարու
մէջ կարգ մը մարդիկ աստուածութեան
պատիւ են ստացած , թէպէտ նոյն իսկ
քրիստոնէից նախամեծար աստուածա-
բանը՝ որորմածին չամաչեմ կոչել աստ-
ուած , ըսած է . բայց մենք Աստուծոյ
փոխանորդ կուզենք կոչել զանոնք՝ որ
թշուառութեան դատապարտուած նը-
մանեացը ինքնայորդոր կ'առատանան :

Այսպիսի ազնիւ զգացմանց տէր ան-
ձինք՝ մասնաւոր բարեգործական ժողով
մը զոււմարելով , նպաստել փափաքեցան
Ս . Փ . Հիւանդանոցին ամեն միսիթա-
րանքէ զուրկ եղող բնակչաց , երեքշաբ-
թի գիշեր Մարտ 26 Բերա , Արեւելեան
Թատրոնին մէջ ներկայացում մը տալով :

Նախ և առաջ այս ազգասէր խոր
հուրդն ծնողին բոլոր ազգայինքս սիրա-
բորքը շնորհակալութիւն կը մատու-
ցանենք , երկրորդ կ'աղաչենք ազգայնոց
չլլանալ ու չինայել իրենց առատաձեռ-
նութիւնը . վասն զի մէկ առատաձեռ-
նութիւն մը հազար սրտի մէջ արձա-
գանց կուտայ , իսկ հազար առատաձեռ-
նութիւնը՝ բխրաւոր :

Հանդիսիս 16 թերթ պակասը անյա-
պաղ հետզհետէ պիտի տանք :

ԽՐԲԱԳՈՒՄ — ՏՆՕՐԻՆ
Ա . ՃԻՎԱՀԻՐՃԵԱՆ

Ա . ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏԳՔՐԱՆ